ԿՈԿՈՅԵԱՆ ԿՏԱԿԻ

պատմութիւնը.

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Եղբ. Յ. եւ Ս. Ալագեանների
1901

ԿՈԿՈՅԵԱՆ ԿՏԱԿԻ

պատմութիւնը





ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ

Տպարան Եղբ. Ց. և Ս. Աւագեանների

1901

Дозволено цензурою С.-Петербургъ 24 Января 1901 г.

Изм
235

ԿՈԿՈՅԵԱՆ ԿՏԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

1896 թուին՝ Սեպտեմբերի 29-ին, Նախիջեւանում մեռաւ Կոկոյեան օրիորդական դպրոցի հիմնադիրը՝ մահտեսի Սրբուհի Պետրոսեան Կոկոյեանը՝ հանգուցեալ Մըկրտիչ Խաչերեսեան Կոկոյեանի այրին. մեռաւ նորա հետ և դպրոցասպասական հարիւր հազարը՝ և ահա թէ ինչպէս։ Տիկին Կոկոյեանը թողեց կտակ, որով 200000 ր. կտակաւանդում էր իրանից հիմնուած, սիրելի և արժանի մօտ Կոկոյեան օրիորդաց դպրոցին, որը գանվում է Նոյին Կայսերական Մեծութեանց անընդմիջական բարձր հովանաւորութեան ներքոյ՝ ի թիւս հիմնարկութեանց Մաշիա Կայսերուհու։ Մի և նոյն ժամանակը հանգուցեալ տիկին Կոկոյեանը՝ իւր կտակի երրորդ յօդուածով կտակաւանդած էր հարիւր հազարի տոկոսիքը մինչ ցմահ յօգուտ դպրոցի պատուաւոր հոգաբարձուհու՝ նոյն իսկ դպրոցի և իւր անձնական բժիշկ՝ պետական խորհրդական Յովհաննէս Մինասեան Բերբերեանի կնոջ՝ Բերսաբէ Պողոսեան Բերբերեանին, ապով նորան իրաւունք գործադրել այդ գումարի տոկոսիքը՝ ըստ իւր բարեհայեցողութեան, ինչ նպատակի և կամենայ՝ ի թիւս այլոց և դպրոցի կարիքներին՝ եթէ ինքը բարեհաճի։ Այսոնց՝ ինդիրը պարզաբանելու համար, մենք կարեւոր ենք համարում ընդ-

միջել առ ժամանակ կատակի պատմութիւնը և անցնել դպրոցի պատուաւոր հոգաբարձուհու, տիկին Բեբսարէ Բեբբերեանի իւր կոչմանը մէջ հաստատելու պատմութեանը։ 1885 թուին՝ նախկին բժիշկ Իսահակ Ալաճալեանի տեղ՝ նորա առաջարկութեամբ և հոգաբարձութեան հաւանութեամբ դպրոցի բժիշկ կարգեցաւ Յովհաննէս Մինասեան Բեբբերեանը, որին վիճակուած էր ճակատագրից մեծամեծ աղէտներու պատճառ լինել նոյն իսկ դպրոցի համար։ Հազիւ անցաւ մէկ և կէս տարի Բեբբերեանի բժիշկ նշանակուելուց՝ և ահա բոլորովին անակնկալ կերպով դպրոցի հոգաբարձութեան համար՝ այրի տիկին Սրբուհի Կոկոյեանը խնդրամատոյց է լինում նորան՝ իւր փոխարէն պատուաւոր հոգաբարձուհի ընտրել իւր բժշկի կնոջ՝ տիկին Բեբսարէ Բեբբերեանին և միջնորդել Բարձրագոյն իշխանութեան առաջ նորան այդ կոչման մէջ հաստատելու։ Հոգաբարձութեան նախագահ՝ նոյն ժամանակուան քաղաքագլուխ Գրիգոր Սալտիկեանը՝ իւր հեռատեսութեամբ բացէ ի բաց մերժում է Կոկոյեանի այդ առաջարկութիւնը՝ առարկելով հետեւեալը. «դպրոցի կանոնադրութեանը մէջ չկայ այդ պաշտօնը, իսկ ինքը Կոկոյեանը վայելում է այդ կոչումը իբրեւ հիմնադիր, ուստի և հրաւիրում ժողովներին մասնակցել՝ նա մանաւանդ, որ նա իւր մնացած գոյքը ևս կտակաւանդած է յօգուտ դպրոցին, իսկ մէկ ուրիշը՝ որ դպրոցին բոլորովին օտար է՝ առանց շօշափելի գումար նուիրելու՝ իրաւունք անգամ չունի արքունի դպրոցի պատուաւոր հոգաբարձուհու կոչումը վայելել»։ Տիկին Կոկոյեանը այդ առթիւ յայտնում է իւր դժգոհութիւնը և վերատին միջնորդում է նորա մասին. «չէ որ՝ ասում է նա, այդ իմ իրաւունքն է. դպրոցը իմն է. որին կուզիմ, նորա իմ տեղս կդնիմ»։ Նախագահը պատասխանում է, թէ այդ այդպէս չէ. օրինակ. «Լուսիս Մելիքովին Բարձրագոյն շնորհուում է կոմսութիւն,

այդ չի նշանակում, որ նա ինքը կարող է այդ կոմսութիւնը տալ օտարին, որովհետև իրանից այդ կախուած չէ»։ Համակարծիք նորան գտնուեցաւ և դպրոցի հոգաբարձութիւնը, և խնդիրը մերժուեցաւ միաձայն։

Սակայն ո՞րքան մեծ եղաւ դպրոցի հոգագարձութեան զարմանքը, երբ կէս տարի անցնելուց յետոյ, բոլորովին անակնկալ կերպով ստացուեցաւ յանուն հոգաբարձութեան նորին Կայսերական Մեծութեան յատուկ Դիւանի շրջրոդ բաժնից Կայսերական հրամարտակ, որով տիկին Բերբերեանը՝ իբրեւ ազգական Կոկոյեանի նշանակվում էր դպրոցի պատուաւոր հոգաբարձուհի՝ համաձայն պառաւ Կոկոյեանի ցանկութեանը։ Զանթահարուած էին հոգաբարձուքը՝ Խ. Սալտիկեան, Ի. Ալաճալեան, Յովհաննէս Խաթրանեան և դպրոցի տեսուչ Գ. Զարիխեանը, սակայն ապիկար էին բան մը անել և պիտի խոնարհէին հանգամանաց առաջ։ Ամենքը արդէն նախագուշակում էին ինելու ապագայ շարիքները՝ տեսնելով բժշկի այդպիսի լմնծ ազդեցութիւնը զառամեալ պառաւ կնոջ վերայ, որի ձեռքով նա կարող էր անխափան հասնել իւր նպատակներին *)։ Բայց և այնպէս՝ քանի որ հոգաբարձութեան նախագահ էր Գրիգոր Սալտիկեանը, Բերբերեանները գործ չունէին դպրոցի մէջ, գոնեա շկար այնպիսի երթևեկութիւն, ինչպիսին նկատվում էր յետոյ, Մինաս Պալասանեանի նախագահութեան օրով։ Արդէն տիկին Բերբերեանը

*) Կարը ժամանակից յետոյ նախիջեան ժամանց Մարիա Կայսերուհու հիմնարկութիւնների գլխաւոր կառավարիչ Պետական Խորհուրդը Գուանոյ, որ և այցելից մեր դպրոցը և գանուելով հոգաբարձութեան անդամ Բարեկամ Մանուէլիչին ասաց՝ «Ահ՝ որ ես ձեր հանձոյքը կատարեցի հաստատել տալով տիկին Բերբերեանին պատուաւոր հոգաբարձուհու կոչման մէջ»։ Սակայն ապշեցաւ՝ երբ լսեց բացատրական պատասխան և իմացաւ, որ ինքը գրաւով գնացած է հոգաբարձութեան կամքին հակառակ և ապա գանելով ասաց՝ «Հոգ չէ՝ նա միայն կմայելի այդ կոչումը՝ առանց որ ևէ իրաւունքներ վայելելու»։

հրաւիրվում էր մասնակցել ժողովներին և ստորագրել արձանագրութիւնները՝ թէև պաշտօնապէս՝ ինչպէս վերջը պարզուեցաւ, նա չունէր այդ իրաւունքը, որովհետև նա վայելում էր միայն պատուաւոր հոգաբարձուհու կոչումը՝ առանց յատկացրած լինելու այդ կոչմանը որոշ իրաւունքներ, մէկ խօսքով դպրոցի պաշտօնեաների շտատի մէջ օրինական ճանապարհով չէր մուծուած այդ պաշտօնը։ Այս տողերը գրողը և Միքայէլ Աղա Մահտեսեանը, որպէս նաև անմոռաց յիշատակի Գաբրիէլ Տարութիւնեան Մելքոնեանը քանիցս զարմացած նախագահի բռնած ընթացքին՝ բացատրութիւն էին խնդրում նորանից այդ խնդրի առթիւ, իսկ նա միշտ պատասխանում էր «այդպէս պէտք է, ուրիշ կերպ չի լալ (չի կարող լինել)»։ Արդարև վերջը՝ հանգուցեալ Գոհոյեանի մահից յետոյ իմացանք հանգուցեալ Նակաշնի Աստման իշխան Սվիատոպոլկ-Միրսկու Գիւանից՝ հենց նորա ստորագրութեամբը դպրոցի խորհրդին ուղղուած մի պաշտօնական գրութիւնից, թէ բժիշկ Բերբերեանը՝ շրջականանալով իւր կնոջ դպրոցի մէջ ունեցած դիրքից համոզել է հանի-մամային (տիկին Գոհոյեան) խնդրատուոյց լինել իշխանին, որ վերջինը ևս իւր կողմից միջնորդէ Թագաւոր Գայսեր առաջ՝ նախ մացնել պատուաւոր հոգաբարձուհու պաշտօնը դպրոցի շտատի մէջ՝ և ապա յատկացնել այդ պաշտօնը Բերբերեանների ընտանիքի կանանց սեռի ապագ ճիւղին, յորդոց որդիս։ Իշխանը ապշած այսպիսի անմիտ առաջարկութեան վերայ և նախատեսելով՝ թէ ինչ վատ հետևանք կարող է ունենալ, եթէ դպրոցի և հենց տիկին Գոհոյեանի համար բոլորովին օտար մարդ՝ առանց կոպէկ մը իւր գրպանից դպրոցին նպաստելու վայելէ այդպիսի իրաւունքներ՝ ոչ միայն ինքը՝ այլև նորա սերունդը, իւր քաղաքավարի պատասխանով յայտնում է տիկին Գոհոյեանին, որը, Բերբերեանի խորհրդով, նուիրած էր յոգուտ

կոյրերի և համրների 3000 բուրլի, յանձնելով այդ գումարը Առամանի կնոջ իշխանուհու տրամադրութեանը, նոյն իսկ նպատակի գործադրելու համար, թէ ինքը՝ համոզուած լինելով, որ արդի հոգարարձութիւնը և նախագահը հակառակ չեն պատուաւոր հոգարարձուհու ժողովներին մասնակցելուն, այլև տեղեկութիւն անգամ ունի, որ արդէն հրաւիրում են, ուստի և ինքը իշխանը անյարմար է համարում այդ առթիւ որ և է դիմում կամ միջնորդութիւն անել Թագաւոր Կայսեր առաջ և ձանձրացնել նորա բարձր ուշադրութիւնը։ Այսպէս միայն հանգուցեալ Սվիատոպոլկ-Միրսկու Առամանի հնուատնութեան շնորհիւ՝ Կոկոյեան գաղթականը ազատուեցաւ Բերբերեանների մշտական յուծից, թէև նորա հարիւր հազար գումարը գերծ չմնաց նոցա ձեռքից՝ և արդէն չորս տարուան ռոկոսիքը մօտ 18 հազար ստացած է տիկին Բերսարէ Բերբերեանը՝ այն գումարը, որը իրանց գրկելով՝ անհաւատալի խնայողութեամբ ամեն բանի մէջ, ժողոված էին թէ ինքը Մկրտիչ աղան և թէ հանգուցեալ տիկին Կոկոյեանը, իրանց անուան գաղթականի անակը որբուկների կրթութեան և դաստիարակութեան համար։ Սուրբ էր բարերարների նպատակը, սակայն պիղծ է փող գործադրութիւնը Բերբերեանների ձեռքին։ Ո՞րքան ես տարի պիտի շարունակուի այս անտանելի դրութիւնը գաղթականների համար, որոնք աչքերը տնկած պիտի սպասեն Առաւածային Նախախնամութեանը արդար վճռին, որը իւր գատաստանով վերջ պիտի դնէ այդ կնճռոտ խնդրին։ Ո՞ւր էր անկախներ, գոյիներ, պուլավկիներ, խամչիներ, Ց. Գէներ, ազգային քարտուղարներ, ո՞ւր էք, ինչու զգաստացել էք այս խնդրի առթիւ։ Չէ որ ազգային շահերի պաշտպան էք ձեզ համարում։ Թէ, զուր ես ամիսկ ժողովրդին հետ կասէք «չուտողին բարին—ուտողին հիլալ»։ Գառնանք կրտակի պատմութեանը, որը պատճառ եղաւ այնքան շարիք-

ների և երկպառակութիւնների թէ դպրոցի մէջ և թէ առհասարակ քաղաքի մէջ և որից օգուտ քաղելով ճարպիկ մարդիկ, յառաջ տարին իրենց կրքերը և կուսակցական նեղ ձգտումները։ Այս տողերը գրողը իբրև պաշտօնական անձն նոյն դպրոցի մէջ՝ ի մօտոյ գիտէր պառաւին 1883 թուից և իբրև ձրի ծառայող վայելում էր նրա վստահութիւնը և յարգանքը, որպիսին այդ ժլատ բնաւորութեամբ կինը հազիւ հազ տածում էր դէպի մէկ երկուսը դպրոցի ծառայողներից, որոնք ձրի էին տանում իրենց պաշտօնը։ Ուելոշդ չեմ համարում՝ խնդրի պարզաբանութեան համար մէկ քանի խօսքով նկարագրել այդ վերին աստիճանի ժլատ և անհամբոյր կնոջ բնաւորութիւնը։ Հանգուցեալը չափազանց սակաւապէտ և խնայող կին էր. խնայողութիւնը հասնում էր ագահութեան։ Զրկելով իւր անձը անհրաժեշտ պէտքերից և շատանալով աշակերտների համար պատրաստուած կերակուրներից, հրաժարուեցաւ անգամ իւր համար հանգիստ անկին ունենալուց եւ բոլորովին խզելով իւր չբարեւոր ազգականների հետ ունեցած կապերը՝ առանձնացաւ իւր դպրոցում՝ աշակերտուհիների ննջարաններին կից գրուած փոքրիկ խեղդուկ օդով, սենեակում։ Նա մանաւանդ խուսափում էր նա թէ բարձր հոգևոր և թէ աշխարհական անձանց ընդունելութիւնից՝ վախենալով մի գուցէ որ եկ բարեգործական նպատակի համար իրանից փող ուզենան. այսպէս երբ Սուքիաս և Ներսէս արքեպիսկոպոսները դրպրոցը այցելելուց յետոյ՝ յայտնեցին անաչին իրանց ցանկութիւնը այցելել հաճի-մամային՝ իբրև դպրոցի հիմնադրի եւ ազգային բարերարի՝ տեսուչը երկար համոզելուց յետոյ հազիւ հազ կարողացաւ յաջողեցնել եպիսկոպոսների ընդունելութիւնը. երբ պառաւը տեսչից մէջ բերուած պատճառաբանութիւնների առաջ դիջանելով, բարեհաճեցաւ բանալ իւր առանձնասենեակի դոց դուռը և Սրբազաններին

ընդունել, հաւատացած լինելով, որ իրանից կոպէկ մը ուզելու չեն, այլապէս հրաժարվում էր անգամ դուռը բանալ՝ ասելով՝ թէ հիւանդ է քէֆ չունի։ Սրբազանները իրանց պարտքը համարեցին այցելել դպրոցի հիմնադրին ու յայտնելով տիկնոջ իրենց գոհունակութիւնը առատաձեռն նուիրատուութեան համար յօգուտ ազգի ուսումնածարաւ ու որբ աղջկանց և սիրելով նորա վերայ իրենց օրհնութիւնը՝ մեկնեցան դպրոցից։ Ահա և մի այլ նմուշ։ Ազգիս Վեհափառ Հայրապետը նախիջևանում կեցութեան ժամանակ՝ բարեհաճեցաւ իւր վեհ այցելութեան արժանացնել և Գոկոյեան դպրոցը։ Փառաւոր ընդունելութիւնից յետոյ՝ երբ Վեհափառը պիտի մեկնէր դպրոցից՝ յայտնելով պառաւին իւր անբաւ գոհունակութիւնը նորա արած բարերարութեանը համար և սիրում էր նորա վերայ իւր Հայրապետական Օրհնութիւնը՝ դպրոցի Վարչութիւնը առաջարկեց պառաւին՝ ի նշան այդ Վեհ այցելութեան բարեգործական նպատակի համար յանձնել Վեհափառի արամադրութեանը գոնեա մի հազար ռուբլի։ Հաճի-մաման առանց տատանուելու յօժարեցաւ. «մեռնելս, առաց նա, աչքիս առաջը եկաւ». նշանակեց օր՝ երբ տեսչի հետ պիտի գնար Վեհին այցելութեան՝ նորա Հայրապետական Օրհնութիւնը առնելու եւ տեղն ու տեղը յանձնելու վերոյիշեալ գումարը։ Որոշուած օրը տեսուչը գնաց Գոկոյեանի մօտ, վերջինը համարեց հազար ռուբլին, կապեց թաշկինակում և միասին ճանապարհ ընկան (կառքով) դէպի Վեհարան, որի դէմ յանգիման գրանիում էր և բժիշկ Բերբերեանի տունը։ Երբ հասան Վեհարանի դրանը՝ պառաւը տեսչին յայտնեց՝ «էրթամ դիմացը Բերբերէին, նորա ալ առնում, վերջը կուգամ և բոլորս մէկ տեղ Պաթուղիկոսին կերթանք ձեռք պաղնելու»։ Տեսուչը կատ մը Վեհարանում սպասելուց յետոյ՝ եկաւ և Գոկոյեանը տիկին Բերբերէ Բերբերեանի հետ, և միասին ներ-

կայացան Վենափառին։ Երբ այցելութիւնը վերջացաւ ու տիկին Գոկոյեանը առն վերադարձաւ, տեսուչը ապշած մնաց՝ իմանալով որ հազար բուբլին 800 էր դարձել։ Պառաւը՝ խորհրդակցելուց յետոյ վճռել էր որոշուած գումարից բան մը խնայելու, ու 200 բուբլի վերայից առել էր. ահա ձեզ բնաւորութիւն։ Մի ուրիշ անգամ իմ ներկայութեամբը՝ մեռնելուց կարը մը առաջ, նա մերժեց իւր միակ եղբօր Եղիազար Բաբասինեանի խնդիրը՝ նպաստ տալու նորա որդուն 300 բուբլի՝ առևտրական գործի համար, որը խոստանում էր վերադարձնել, մի քանի ժամանակից յետոյ։ Ահա թէ ինչպիսի ժլատ բնաւորութիւն ունէր հանգուցեալը և պէտք է զարմանալ՝ թէ ինչպէս կարողացան Բերբերեան ամուսինները գրաւել նորա հաւատարմութիւնը և ապա վայելել նորա վստահութիւնը իրանց նախագծած նպատակին հասնելու խնդրում՝ շահադիտական ձգտումներով, չունենալով պառաւի հետ ոչ մի ազգակցական կապ։

Այդ նպատակին հասնելու համար բժիշկ Բերբերեանը ամէն օր յաճախում էր պառաւին, իբր նորա առողջութեանը վերայ հոգալու նպատակաւ, այնտեղ գալիս էր և տիկին Բերբերեանը և այրուկին միասին ամբողջ ժամեր խորհրդակցում էին հաճի-մամայի սենեակումը՝ թէ ինչպէս յարուցանեն պառաւին գպրոցի վարչութեան և հոգաբարձութեան դէմ. այդ դէպքում նրանց օգնում էր և վարժուհի Գեղեանը, որը կատակի երևան գալուց յետոյ սարսափեցաւ թողնել իւր պաշտօնը Բերբերեաններին մատուցած ծառայութեանը համար, և ուժից նոցա հետ ունեցած բարեկամական սերտ կապի շնորհիւ։ Մինչդեռ Բերբերեանները օրէցօր գրաւում էին հաճի-մամայի ուշադրութիւնը՝ գալիս էին ամէն օր պառաւին խոստակցութեամբ զբաղեցնելու, բերում էին նորան շերբէթ-պերեքի, ռահաթ լոխում, թելրաց ամոա և իրենց ուրիշ պատրաստութիւնները, ասում էին

իրենց ամբանոցը ու մէկ խօսքով «եաեէն առջեէն կը քալէին», ինչպէս ինքն էր ասում։ Դպրոցի վարչութիւնը և հոգաբարձութիւնը նշանակութիւն չէր՝ ապիս դորան քաջ գիտնալով պառաւի բնաւորութիւնը և համարելով նորան անառիկ բերդ, ուստի և համոզուած էին, որ դորանից կարող չէ յառաջանալ որ և է նիւթական վնաս դպրոցի շահերի համար, որովհետև փոդի վերաբերեալ խնդրում հաճի-մաման «քար-ապանոս» էր։ Մերժելով իւր չքաւոր ազգականներին հասցնել իւր նիւթական օգնութիւնը՝ նա պատասխանում էր նոցա՝ «Ունեցած սատկս իմը չէ, էրկանս հելալ քրտինքովը վաստրկածն է. չուտելէն չխմելէն, վրայ-վրայ դնելէն գոյացած է, էրսիզ ազջիկներուն է, եսալ իմ ալէրիս խարճելէս մատէ մնացածը թոփ կանիմ վարժատունին համար, ես չեմ սատկին ալէրը, վազ էկիք եախայէս, բան չունիմ տալու, մեռնելէս եաքը բոլորը վարժատունինն է, էրկանս կամքը սուրբ է»։ Այս այսպէս լինելով՝ ո՞ւրքան զարմանալի և անհաւատալի պիտի թուէր մեզ պառաւի վերջին կտակը, որ անհամապատասխան էր թէ նորա բուն մտքին և թէ փոդ հաւաքելու նպատակին. արդարև այդ այնքան անակնկալ էր հոգաբարձութեանը համար, որքան անակնկալ և անախորժ էր ամբողջ հայ հասարակութեանը համար, որ և իսկոյն յայտնեց իւր բարոյական բողոքը՝ ժողովրդի ազնիւ և բարեմիտ անձինքների առաջագրութեամբ։

Իրենց նպատակ դնելով՝ փոխել տալ տիկնոջ դպրոցի օգտին արած կտակը՝ որով մօտ 200000 ր. գումարը պիտի անցնէր դպրոցի Հոգաբարձութեանը՝ Բերբերեանները համոզեցին նոր կտակ անել, որով դպրոցին կտակաւանդուած փոդի տոկոսները լիովին պիտի անցնէին պառաւաւոր հոգաբարձուհու տիկին Բերբերեանի ձեռքը այն պայմանաւ, որ նա «ըստ իւր բարեհայեցողութեանը» գործադրէ այդ միայն դպրոցի կարիքներին։ Այս էր նոցա առաջին փորձը և-

ղած կտակը փոխելու իրանց ուզեցածին պէս։ Սակայն հաճի-մաման այնքան զգոյշ էր, որ նախագծած կտակի միտքը իրեն պարզելու համար, այն կտակի, որի նախագիծը կանխաւ կազմած էր նոտար Խաչերես Խ. Զալխուշեանը՝ Բերբերեանի ցանկութեանը համեմատ, կարեոր էր համարել հրաւիրել այն անձանց, որ մօտ էին թէ իրեն և թէ դըպրոցին՝ հոգաբարձութեան նախագահ և քաղաքագլուխ Մինաս Գալաղանեանին և հանգուցեալ Գաբրիէլ Ց. Մելքոնեանին, որ նմանապէս անդամ էր նոյն հոգաբարձութեանը։ Եւ որովհետև ինքը պառաւը չգիտէր ռուսերէն, հետևաբար եւ չէր կարող ճշտիւ հասկանալ կազմելի կտակի նախագիծը, ուստի և վերոյիշեալ անձինք իրենց պարտականութիւնը համարեցին հասկացնել նորան այդ կազմելի կտակի բուն միտքը։ Նոցանից մէկը՝ պ. Գալաղանեանը նկատեց. «հաճի-մաման, ասաց նա, մարդը որ կտակ կանէ, մէմը էնկ առջևէն ինքը պիտի հասկընայ իրեն արածը, որ վերջը նեռոռազումենի չելլէ խօռք հասկնալու, այդ նոտարիուսին գրած կտակին զօրութիւնովը՝ վարժատունին թողցունելու սատկիդ տոկոսիքին տէրը պիտ լայ տիկին Բերսաբէն. նա, պիտի ստանայ սատկը, նա պիտի խարճէ իրեն ձեռքովը թէև վարժատունիդ վրան։ Խարճել ալ կայ, խարճել ալ կայ. զօր օրինակ, տեսուչը պիտի ասէ «աշակերտուհիները շատացել են, մէկամայ պառայելնի կլաս պիտի բացուի», իսկ տիկինը էարող է ասել ես ատոր կարիքը չեմ տեսնուլ, ես ուզիալ պիտի գնեմ. դպրոցի վարչութիւնը կուզենայ դպրոցի մէջը այս կամ այն պակասութիւնը լրացնել, իսկ տիկինը կարող է ասել. «Էլ, ես Պեզճեան Ղազարէթին աշխատանքը պիտի վարձատրեմ, նա ազոցէր ու վարժատունին արատցու է»։ Այսպէս դանազան օրինակներ մէջ բերելով պարզեց պառաւին, թէ ինչպիսի չարիքներ կարող է յառաջանալ 'ի դէպս նոտարից նախագծած կտակի հաս-

ատաուելուն։ Նոյնը պնդում էր և հանգուցեալ Մելքոնեանը, որի հեղինակութիւնը մեծ էր հաճի-մամայի առաջը։ Իմանալով այդ իրեն հատատաուութեանը առաջարկուած և նախագծուած կտակի միտքը, նա ոչ միայն չտուեց իւր հաւանութիւնը, այլ և նկատեց, որ դա իրեն համար նոր բան է և ուրիշ բովանդակութեամբ գրուած և բոլորովին համապատասխան չէ իւր նուիրական կամքին, այլ և հակառակ և տարբեր, քան թէ նորան ասած էր դորա մասին իւր բժիշկ Յովհաննէս Բերբերեանը, թէ ինքը՝ համաձայնելով փոխել իւր նախկին կտակը, նկատի ունէր յատկացնել տիկին Բերբերեանին գործադրել հոգաբարձութեան միջոցով, միայն կտակաւանդած գումարի կէսի տոկոսիքը և այն դպրոցի պէտքերին, և գլխաւոր շարժառիթը այն էր, որ դորանով կուզէր միայն բարձրացնել դպրոցում տիկին Բերբերեանի վարքը՝ իբրև պատուաւոր հոգաբարձուհու, որովհետև ինքը Բերբերեանը չունի հնար իւր սեպհական միջոցներից բաժին հանել դպրոցի մէջ երեկոյթներ, պարերեկոյթներ, աշակերտուհիների համար հանդէսներ և տօնածառեր սարքել և նկատած պակասորդները լրացնել՝ ինչ որ անում են միւս արքունի դպրոցներում պատուաւոր հոգաբարձուհիները սեպհական փողերով՝ այդ պատուաւոր կոչումը կրելու փոխարէն։ Թէ Մելքոնեանը և թէ Պալասանեանը՝ պառաւի այդ ցանկութեան մէջ չտեսնելով ոչինչ դպրոցի շահերին հակառակ և վնասակար, որովհետև գումարի գործադրութիւնը. պիտի լինի հոգաբարձութեան ձեռքով, այլ և ի նկատի առնելով տիկին Բերբերեանի նիւթական դրութիւնը, որ չէր ներում նորան վերոյիշեալ ծախքերը անել իւր սեպհական միջոցներից, Գոկոյեանի ցանկութեանը դէմ չկեցան, և վերոյիշեալ կտակի նախագիծը փոխուեցաւ այսպէս. իւր բոլոր կարողութիւնը մօտ 200000 ր. կտակելով իւր սրտին մօտ և սիրելի Գոկոյեան դպրոցին՝

տիկին Կոկոյեանը մի և նոյն ժամանակը յատկացնում է պատուաւոր հոգաբարձուհուն այդ գումարի կէսի տոկոսիը բան իւր բարեհայեցողութեանը գործադրել գպրոցի պէտքերին միայն հոգաբարձութեան միջոցով։ Ցաւոնի բան է, Բերբերեանները անբաւական մնացին այս կտակից, որովհետև նա չէր համապատասխան իրենց նուիրական նպատակներին։ Իւր անբաւականութիւնը այդ առթիւ՝ բժիշկ Բերբերեանը յայտնեց բացարձակ Կոկոյեանի խոստովանահայր քահանային գպրոցի կրօնուսոյց Տէր Խաչատուր Զարիֆեանին հետևեալ խօսքերով. «իւր մեկնութիւններովը և բացատրութիւններովը՝ որը Պալապանեանը տուեց հաճի-մամային՝ նոքան առաջարկած կտակի նախագծի վերաբերմամբ, նա միայն խանգարեց և արգելք հանդիսացաւ իմ նուիրական նախագծի իրագործմանը. այդպէս նա ինձ բարեկամ է»։

Դրանից յետոյ Բերբերեանները սատիկ զայրացած անյաջողութիւնից՝ իրենց նպատակ դրին հեռացնել պատուից՝ և այսպէս ասել, օտարացնել նոքանից բոլոր իրենց ատելի անձանց, որոնք գպրոցի մէջ ունէին որոշ դիրք եւ ազդեցութիւն, հետևաբար կարող էին արգելք հանդիսանալ նոցա նպատակներին։ Հասարեան թէ ամէն օր յաճախում էին նոքան և աշխատում էին նոքան հաւատացնել, թէ ինքեանք միայն սրտացաւ են գպրոցի շահերին եւ թէ վարչութիւնը վատնում է ի զուր գպրոցի միջոցները, առանց խնայողութեան։ Որ այս լոկ խօսքեր չեն, այլ իրողութիւն, կարող է վկայել այս տողերը գրողը, որը անձամբ լսած է հաճի-մամայից և աշխատել է փարատել նոքա այդ սխալ կարծիքը. սակայն միւս օրը դարձեալ նոքա համոզում էին նոյնը՝ գպրոցի դասախօսակ տիկին Պեղճանի միջոցով, որ միշտ պատուին մօտ էր՝ և այդպիսով յաջողեցնում էր նոցա բոլոր ցանկութիւնները։ Վերջն ի վեր-

ջը, գառամեալ 84 տարեկան պառաւին նորա առին իրենց ձեռքը, գերեցին նորան. մանաւանդ խօլերայի 1892 տարին, երբ նա շուտ շուտ սկսաւ հիւանդանալ և այն փորտարին-քով։ Բժիշկը կնոջ հետ անրաժան էին նորանից. ժամանակը ամառնային արձակուրդ էր և դպրոցում չկար ոչ ոք վարչութեան անդամներից։ Հենց այդ իսկ ժամանակն է կազմուած վերջին կտակի նոր նախագիծը՝ իբր պառաւի կրօնական զգացմունքի բաւականութիւն տալու համար, այն է նախկին կտակի մէջ աւելացնել մէկ նոր յօդուած դպրոցի չինութեան մէջ եկեղեցի կառուցանելու վերաբերմամբ, որի համար իբր թէ հարկաւոր էր և նախկին կտակը փոխել։ Վերջին կտակի մասնակցած չէին ոչ Հոգաբարձութեան անդամները և ոչ դպրոցի Վարչութիւնը, այլ հրաւիրուած էին բոլորովին օտար անձինք, ոչ միայն դպրոցի հետ կապ չունեցող և տիկին Գոկոյեանին անծանօթ, այլ և մինչև անգամ քաղաքում և հասարակութեանը մէջ ոչ դիրք ունեցող և ոչ հեղինակութիւն։ Ահա թէ ինչ է պատմում այդ տխրահռչակ կտակին մասնակցող վկաներից մէկը. «1892-ին ամառը ես նամակ ստացայ իմ բարեկամից՝ բժիշկ Բերբերեանից, որով նոյն օրը երեկոյեան հրաւիրվում էի Գոկոյեան դպրոց մէկ կարևոր գործի համար։ Ես շտապարուեցայ երթալուց։ Ինձ պատահեց մուտքի առաջ վարժուհի Պեզեանը և տարաւ հաճի-մամային սենեակը։ Այնտեղ իմ աչքիս ներկայացաւ հետևեալ տեսարանը. մահճակալի վերայ նստած էր հիւանդ պառաւը, նորա մօտը տիկին Բերբերեանը, իսկ սենեակի մէջտեղը նստած էր նոտար Խաչերես Չալիուշեանը և լապտերի աղօտ լուսով մի ինչ որ գրում էր. այնտեղ գտնվում էին և ինձ ծանօթ Պիտեանի որդին Նիկողայոսը (Բերբերեանի ազգականը) և Ստեփան Խումաճեանը (Պիտեանի գործակատարը, այժմ մեռած). սենեակում տիրում էր խորին լռութիւն։ Տիկին

Բերբերեանը ինձ պառաւին ներկայացնելուց յետոյ աւելացրեց. «հաճի-մաման կուզէ կառը մը կառչը փոխել. օրինակ՝ կուզէ կառկին մէջը աւելցնել նոր յօդուած դպրոցում եկեղեցի չինելու մասին, և ինձ ալ կը խնդրէ, որ ուրիշ նոյն նպատակի համար հրաւիրուած վկաների հետ հաստատեմ ստորագրութեամբս՝ թէ պառաւը այդ կառկը կանէ խելքը վրան և առողջ դատողութեամբ»: Այդ վկան ամենուն յայտնի՝ տեղւոյս ազգային հաստատութիւնների քարտուղար՝ հռչակուած Խաչատուր Ստեփանոսեանի ազգականն է, Յակով Բողդանեանը, և նորա գրաւոր ցուցմունքը պահուած է դպրոցի գործերում: Իսկ ինքը Բողդանեանը խօսակցութեան մէջ ինձ առանձին յայտնեց և ապա նոյնը գրաւոր պատասխանեց դպրոցի շահերը պաշտպանող, իրաւաբան Պետրովին, թէ ինքը՝ բոլորովին անծանօթ լինելով թէ տիկին Գոկոյեանի և թէ նորա նախկին կառկի բովանդակութեանը հետ, և ոչ մի շարամտութիւն դորա մէջ չտեսնելով, կատարել է իւր բարեկամ տիկին Բերբերեանի խնդիրը և դորանով մեկնում է իւր Պիւթիայի լռութիւնը, որ նա պահպանել է ամբողջ չորս տարի՝ մինչև պառաւի մահը: Սակայն այդ խոստովանութեամբը պ. Բողդանեանը չէ կարող քաւել իւր անների մեղքը: Այն մեծ նիւթական և բարոյական մնասը, որը յառաջացաւ դպրոցի համար նորա երևակայական միամտութիւնից, երկար ժամանակ պիտի ծանրանայ նորա խղճի վերան: Հէ՞ որ այն գումարը, որը դեռ յիսնական թուականներին նշանակուած էր հանգուցեալ Մկրտիչ Աղա Գոկոյեանից դպրոցի օրբուկներուն համար, այժմ՝ Բողդանեանի շնորհիւ՝ պիտի ծառայէ Բերբերեանների սեղանն ու նիստ ու կացը ճոխացնելու, Յանցանք, անների յանցանք Բողդանեանի կողմից: Պառաւի մահից երկու օր առաջ դպրոցի տեսուչ Դ. Զարիխեանը և պ. Մինաս Պալասանեանը, դպրոցի տարեդարձի օրը, վերադառ-

Ցրտ 285

նալով հանգուցեալ Մկրտիչ աղա Կոկոյեանի հոգեհանգստից՝ Սուրբ Համբարձման եկեղեցուց, ցած իջան հիւանդ պառաւին այցելելու և ցանկանալու նորան որ շուտ առողջանայ։ Այս միջոցին պ. Պալապանեանը կատակով խորհուրդ տուեց Զարիխեանին, «մէկ բան ուզացիր, ասաց, հաճիմայէն, թող քու ճակատդ կրէ, ինչ որ սրտէն ըղխայ»։ Հաճի-մաման պատասխանեց. «տալու բան չունիմ, բոլորը տուիլ իմ վարժատունիս, արդէն մեռնիմնալ նը կըլայ, չուզիմ ապրիլ»։ Ցեռոյ դառնալով նոցա՝ խնդրեց յարգել և իւր յիշատակը այնպէս, ինչպէս միչև ցարդ յարգում էին իւր ամուսնու յիշատակը, սիրել իւր հիմնած դպրոցը, աշխատել աւելացնել նորա նիւթական միջոցները և եկամուտները, ինչպէս ինքն էր անում, որպէս զի չինեն մի նոր փառաւոր շինութիւն, որը չկարողացաւ ինքը կառուցանել իւր կենդանութեանը օրով։ Երրորդ օրը մեռաւ պառաւը։ Բերբերեանը, որ իւր կնոջ հետ քանի օր առաջ տեղափոխուած էր պառաւի սենեակը և մօտից մի քայլ հեռու չէր գնում, իսկոյն դպրոցիցչ տապում է այժմս հանգուցեալ Գարբ. Յարութիւնեան Մելքոնեանի մօտ հաղորդելու նորան Կոկոյեանի մահը։ Իմանալով բժշկից պառաւի մահուան լուրը՝ պ. Մելքոնեանը պատասխանում է. «Ստուած հոգին լուսաւորէ, խալոնցաւ, ճանճ խօմ ըլալու չէր, պատին կպչելու չէր»։ Բերբերեանը նորան նկատում է. «հելպէթ չօխտանէ նորան մեռնել պէտք էր, համա բանը ան չէ, հապա նորան վերջի կտակի զօրութիւնովը ինքը Մելքոնեանը իրեն կնկանը հետ կտակակատար նշանակուած են»։ Ապշած նորութիւնից Մելքոնեանը պատասխանում է. «բան չիմ հասկընալ, ես խօմ վկայ իմ, դուն եանլըշ իս»։ «Էհ, եանլըշ չիմ, տուն գիտիս քի կենէ առաջուան կտակն է, թուֆ, նոր կտակ կայ արած, տուն ալ Բերբարէին հետ կտակակատար նշանակ վիլ իս և պիտի ամէն բանը կարգադրիք»։ Սասաիկ զայրացած

ԼՍԵԿ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆԸՆԵՐԻ ԱՄԵՆԱՀԱՄԱԵՆՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Մելքոնեանը նորան պատասխանում է. «Ի՞նչպէս դուն համարձակեցար առանց իմ յօժարութեան և գիտութեան այդ բանը անել»։ «Համա բան. ինչպէս քեզի իմացունէի, դունալ զայիր, Պալապանին յայանէիր, նա ալ կենէ քեռէը ըլլար ադ կտակին գլուխ ելլելուն, ինչպէս որ առաջի անգամը քանդեց իմ ձեռած 1889-ին կտակը», պատասխանեց Բերբերեանը։ Ահա խոստովանութիւն բղխած ուղիղ սրտից և արժանի խոստովանող անձին։ Վրդովուած այսպիսի անամօթ և յանդուգն վարմունքից, Մելքոնեանը իրան վիրաւորանք համարեց ներգործական դեր խաղալ այնպիսի խայտառակ կտակի մէջ, որը կարող էր արատաւորել և ստուերձգել նորան անբիծ անունը վերայ, ուստի և իսկոյն յայտնեց դպրոցի Հոգաբարձութեանը՝ թէ ինքն անվայել է համարում իրան կտակակատար լինել հանգուցեալ տիկին Կոկոյեանի՝ դպրոցի պատուաւոր հոգաբարձուհու հետ, հետևաբար և հրաժարւում է դորանից։ Ապա Մելքոնեանը՝ բժշկի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ գնում է քաղաքագլխի մօտ և յայտնում է նորան եղելութեանը մասին։ Յետոյ նոքա միասին գնում են դպրոց, ուր պատահում են տիկին Բերբերեանին թաղման կարգադրութիւնները անելիս։ Տիկինը պառաւի մահը նոցա յայտնելուց յետոյ՝ բաց է անում պառաւին կասան, որի բանալին նորա մօտ էր դեռ քանի օր յառաջ, և ցոյց տալիս կտակը՝ աւելացնելով, թէ նոր կտակ է, սակայն շատ քիչ զանազանվում է նախկինից, մէջը աւելացրած է նոր յօդուած եկեղեցի շինելու համար, մնացեալ բովանդակութիւնը նոյն է։ Պալապանեանը Մելքոնեանի և դպրոցի տեսուչ Գ. Զարիխեանի ներկայութեամբ տիկնոջ պատասխանը լսելուց յետոյ՝ ասաց ռուսերէն. «то, да не то» և դառնալով միւսներին նկատեց. «Մեղի բան չկայ այստեղը անելու, առ ժամանակ նոցա իրաւունքն է (Բերբերեանների)

թաղման վերաբերեալ կարգադրութիւնները անել, մնացածը վերջը կընայինք, կբխորհինք»։ Այստեղ աւելորդ չենք համարում յիշել նաև, որ պառաւի մահուան մասի պաշտօնական տեղեկութիւն չէր հաղորդուած ոստիկանութեան, նորա շարժական գոյքը չէր ցուցակագրուած, միայն՝ ինչպէս յետոյ գործից երևաց, կորած էին երկու տուժին արծաթէ դգալները և թանկագին ոչ եաղութ քարը, որը յիշվում է պառաւի կտակի մէջ և յայտնի էր դպրոցի վարչութեանը։

Հենց որ քաղաքում տարածուեցաւ պառաւի մահուան լուրը և նոր կտակի գոյութիւնը, իսկոյն խնդրամատոյց եղան յանուն Հոգաբարձութեան քաղաքիս մէջ դիրք ունեցող և ժողովրդի մէջ հեղինակութիւն վայելող ինտելիգենտ դասակարգից 135 հոգի, աղաչելով դատ բանալ Բերբերեանների դէմ թշուառ և դրկուած որբերի շահերը պաշտպանելու համար։ Առաջին նուագ Հոգաբարձութեան մէջ ևս այդ խնդրի առթիւ տարաձայնութիւն ծագեցաւ. անդամներից մէկը՝ տեղւոյս փոխադարձ վարկի ընկերութեան կառավարիչ Գէորգ Սալտիկեանը այն կարծիքին էր, թէ ինքը ևս չէր հրաժարուեր այդ փողից, եթէ հաճի-մաման իրեն անելու լինէր, ուրեմն, ասում էր նա, թողնենք այդ բանի մասին խօսելը կամ որ և է հարց յարուցանելը։ Սակայն ժողովրդի ներկայացուցիչների բարեմիտ մասը վրդովուած լինելով դպրոցի բժիշկ Բերբերեանի ընթացքից, որ նա ծառայելով դպրոցի մէջ աշխատել է միևնոյն ժամանակը ի մնաս նորա և յօգուտ իւր կնոջ շահերին՝ գործ դնելով իւր ազդեցութիւնը դատամեալ 84-ամեայ պառաւի վերայ և կտակը փոխել տալով իւր ուղածին պէս՝ վճռում են արձակել նորա պաշտօնից՝ որպէս նաև՝ չհրաւիրել տիկին Բերբերեանին ժողովներին մասնակցելու։ Այդ վճիռը Բարձր իշխանութիւնը բժշկի վերաբերմամբ երկիցս փոխում է՝ վերահաստատելով նորա պաշտօնին մէջ, ի նկա-

տի առնելով գործի ձևական կողմն, սակայն վերջ ի վերջոյ այդ վճիռը հաստատվում է Հոգաբարձութեան նախագահ իշխան Սվիատոպոլկ Միրսկուց առանձին գրութեամբ յանուն Հոգաբարձութեան 1897 թ. Ապրիլի 2, որով բժիշկ Բերբերեանը արձակուած է լինում պաշտօնից, за нерадѣніе и упущеніе по службѣ. Ապա բժիշկը դիմում է խնդրագրով Ն ո ր ի ն Կ ա յ ս ե ր ա կ ա ն Մ ե ծ ո ւ թ ե ա ն IV բաժնի Մարիա Կայսերուհու հիմնարկութիւնների Գլխաւոր կառավարչին միջնորդել դպրոցի Հոգաբարձութեան առաջ, որ իւր պաշտօնից արձակուելը լինի՝ համաձայն իւր խնդրագրին, և ոչ վիրոյիշեալ ձևով։ Գլխաւոր կառավարիչը միջնորդում է Հոգաբարձութեան առաջ, որը և յարգում է նորա այդ միջնորդութիւնը՝ յայտնելով միանգամայն՝ թէ ինքը ևս չէր ուզում պատժել Բերբերեանին և զրկել նորա արքունի ծառայութեան արտօնութիւններից, այլ չէր ուզում նորան տեսնել դպրոցի պաշտօնեաների թուում։ Կնոջ վերաբերմամբ ևս Տեսչի մատուցած առանձին զեկուցագրից պարզուեցաւ՝ թէ տիկինը շարունակում է միայն վայելել Բարձրագոյն իրեն շնորհած պատուաւոր Հոգաբարձուհու կոչումը՝ առանց որ և է դրա հետ կապուած իրաւունքների։ Այդպէս մեկնեց այդ խնդիրը նաև Բարձրագոյն իշխանութիւնը, և դպրոցը՝ փառք Աստուծոյ, ազատուեցաւ Բերբերեանների արշաւանքից։

Հոգաբարձութիւնը դատ բաց արաւ Բերբերեանի տիկնոջ գէմ, սակայն տանել տուաւ դատը երկու դատաստանական ատեաններում, և այժմ բողոքած է Կառավարիչ Սենատի քաղաքական գործերի վերաբերեալ Վճռաբեկ Ատեանը։ Բողոքը մատուցել է դպրոցի տեսուչ Պետական խորհրդական Գ. Զարիխեանը՝ իբրև լիազօր Հոգաբարձութեան. անկախ դրանից մատուցել է նաև առանձին խնդրագիր՝ գործը վերաքննելու. խնդրին յարակցած է իրանից դատած

նոր մի առանձին կտակ, որ պառաւ Կոկոյեանը արած է 1857-ին Նովոշերկասկում քաղաքական դատարանի պալատում (երբ դեռ չկային նոտարներ և նահանգական դատարաններ), յանուն իւր ամուսին Մկրտիչ Աղա Կոկոյանին և զորան մասնակցել են նոյն իսկ վկաները, նոյն իսկ օրը, երբ Մկրտիչ Աղան արել է կնոջ իւր կտակը։ Ցեսչի գտած պառաւ Կոկոյեանի նոր կտակից պարզվում է, որ տիկին Կոկոյեանը երբէք իւր սեպհական փողը ունեցած չէ և ունենալ էլ կարող չէր յետոյ, երբ նա այրիացաւ։ Ահա զորա պատճէնը։

Ցամին 1857 Մարտի 7-ին ես ի Ն'ըրբոյ ստորագրեալս Նախիջևանցի երկրորդ կարգի վաճառականի Մկրտիչ Կոկոյեանի կինը՝ Սրբուհին Պետրոսեան, Պապասինեանի դուստրը, իմ ամուսնու կամքին հետ համաձայն եմ, և նորա կտակը՝ ինչպէս մեր ընդհանուր ցանկութեան համապատասխան հաստատելով լիովին, կյանքում, որ ամուսնութեանս միջոցին ես իմ հօրից ստացայ այնքան չնչին գումարի օժիտ, որ համեմատութեամբ նորա միւս զաւակների ստացածներին կարող է համարուել ոչինչ. այլ և իմ ծնողաց մահուանից յետոյ՝ ես իմ եղբարցս յորդորանօք հրաժարուեցայ ստանալ հօրիցս մնացած ժառանգութեան այն մասը, որը ինձ էր պատկանում հայոց օրէնքներով, թողնելով իմ բաժինը յօգուտ միւս ժառանգների։ Իրեղէնները, որը այժմ ես ունիմ և ինչ որ վերջը պիտի ունենամ, իմ ամուսնի վաստակածն է, որը պարտաւոր չլինելով ուրիշ մէկին հաշիւ տալ՝ պէտք է դարձնէ զուտ փողի և յարակցէ իւր սեպհական գումարին իւր կտակաւանդած նպատակին գործադրելու համար։ Եւ որովհետև 'ի դէպս ամուսնուս մահուան ես մինչ ցմահ պիտի օգտուիմ բոլոր իրանից իմ պատմադրութեանը կտակած ու թողած զոյքից՝ առանց մասն հանելու ինձ, ուրեմն իմ մահից յետոյ ոչ մի օրինաւոր

ման կարող չեմ կտակել մինչև անգամ իմ ազգականներին, որովհետև ոչինչ սեփականութիւն ունենալու չեմ. ուստի ինչ որ մնայ ինձանից յետոյ կանանց իրեղէնների տեսակից, պէտք է վերածուի փողի և յարակցուի ընդհանուր գումարին, որը պէտք է ուղարկուի Տագանրոգի Հասարակաց խնամարկութեան Գրիկորը: Այս է իմ վերջին կամքը, որ՝ ապերասում եմ ճշտիւ կատարել, ում որ վերաբերուի դորա իրագործումը: Տիկին Կոկոյեանի այս ամրագրած և հաստատուած կտակին տակը նորա տեղը անգրագէտ լինելուն պատճառաւ ստորագրեցի Նախիջևանցի մեշչանին Խաչատուր Խութլուբէգեան. Սոյն օրինաւոր կտակի վկայ եղանք և տակը ստորագրեցինք. Տոհմական պատուաւոր քաղաքացի Թեոդոր Վասիլեվ, որդի Միտրոֆի, բնակիչ Ռոստով քաղաքի (Դոնի վերայ), Ռոստով քաղաքի երրորդ կարգի վաճառական Մաքսիմ Եմելիանով որդի Գասարիկին: 1857 թուին 7 Մարտի այս կտակը օրինաւոր վկայուած է Զօրքի Քաղաքական Դատարանում և կտակի վերաբերեալ վաւերական մատեանում ներմուծուած է № 11, դիւանական մաքս վերցրած է երեք բուբլի, յայտարարութիւնների տպագրութեան և առաքման երեք բուբլի և վեց թերթ գերպոմի թուղթի յայտարարութիւնների համար մէկ բուբլի 30 կոպ., ընդ ամենայն թուղթ դրամով 7 բ. 80 կ. և պղնձի փողով 3 կոպէկ ստացուած է: Որ և Զօրքի Քաղաքական Դատարանը ի լրումն վճռոյն կայացելոյ յ7 Մարտի վկայում է ստորագրութեամբ և գրոշմամբ արքունի կնքոյ:

ԿՆԻՔ
Քաղաքական
Դատարանի Գալատի
որ 'ի Նովոչերքասք

Իսկականն պատշաճաւոր ստորագրութեամբ է:

Ընդ իսկականին համեմատ է՝

Տեսուչ Կոկոյեան դպրոցի Գեղական Խորհրդական և ասպետ Դ. Զարիխեանց:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, պառաւ Կոկոյեանը բոլորովին մոռացած էր այս կտակի մասին, որովհետև փոխելիս իւր կտակները հետզհետէ քանդում է նախկին կտակները, յիշելով նրանց մասին, իսկ այս կտակի մասին ոչ մի կտակում չէ յիշում։ Արած է այս կտակը՝ ինչպէս երևում է գպրոցի դիւանում գտնուած հին գործերից դեռ Մկրտիչ Աղա Կոկոյեանի կտակը չհաստատուած, երկուքն էլ այր և կին մի և նոյն ժամանակ փոխադարձաբար միմեանց արած են այս կտակը՝ իրրև գրաւական՝ որ իրանց մահից յետոյ ոչ այրը և ոչ կինը իրաւունք ունին իրենց ազգականներին, ուր մնաց որ ուրիշին, կտակելու։

Դառնանք միւս երկու հետզհետէ 1889 և 1892 թուին արած կտակներին։ Համեմատելով երկու վերջի կտակները հանգուցեալ Կոկոյեան տիկնոջ, և ի նկատի առնելով այն հանգամանքները, որոնց հետևում է անմիջապէս նախորդ կտակը, այն է՝ Բերբերեան ամուսինների մշտական ձգտումը հետզհետէ նախապատրաստել պառաւին իրենց ուզածին պէս կտակ անելու, և այն շահագիտական նպատակով, միջոցների ընտրութիւնը իրենց նախագծած նպատակին հասնելու՝ աշխատելով ձեռք բերել պառաւի վստահութիւնը և միևնոյն ժամանակ հեռացնել նորանից այն անձանց, որ անմիջապէս 'ի պաշտօնէ հետաքրքրուած էին այդ հարցով՝ և այս բոլորը ապացուցուած անկեղծ խոստովանութեամբ բժիշկ Բերբերեանի, որը նա արած էր տիկին Կոկոյեանի խոստովանահօր՝ Զարիֆեան ա. քահանայի՝ իսկոյն 1889 թուին կտակից յետոյ, այլ և ի նկատի առնելով այն հանգամանքները, որ տեղի ունէին վերջի կտակը արած ժամանակը, այն է՝ ա) տարուան եղանակը, ամառնային արձակուրդ, երբ գպրոցում չկար ոչ ոք վարչութեան անդամներից, բ) պառաւի հասակը և նորա հիւանդոտ վիճակը 1892 խօլերայի ամառը, գ) նորա ուսերէն

չգիտնալը գոնեա այնքան, որ կարողանար ըմբռնել երկու վերջին կտակների մէջ եղած տարբերութիւնը, դ) Բերբերեանների ընտրած պատճառաբանութիւնը կտակը փոխել տալու համար՝ որ մատչելի էր պառաւի հասկացողութեան և նորա կրօնական զգացմունքներին յագուրդ տուող՝ երբ 84 տարեկան Կոկոյեանը իւր հասակի վերջին օրերը արդէն մէկ ոտով կանգնած էր մահուան դուռը, ե) խպառ հեռացնելը այն անձանց, որ շատ մօտ էին պառաւին՝ 'ի պաշտօնէ, և անշուշտ կարող էին այս անգամ ևս զգուշացնել նորան և այդպիսով արգելք հանդիսանալ նոցա յանցաւոր դիտաւորութեան իրագործման, զ) վկաների ընտրութիւնը՝ դոյն իսկ նպատակի համար հրաւիրուած բժիշկ Բերբերեանից, է) նոր կտակի գաղտնիք մնալը ամբողջ 4 տարի, ը) գլխաւոր վկայ Ֆ. Բողդանեանի ցուցմունքը, որ միակ հասկացողներից էր միւս վկաների մէջ և անշուշտ ըմբռնել էր այդ կտակի գաղտնիքը, թ) անկեղծ խոստովանութիւնը Բերբերեան բժշկի, որ նա արել էր հանգուցեալ Մելքոնեանին՝ Կոկոյեանի մեռած օրը, ժ) ժողովրդի լաւ մասի և ինտելիգենտ դասակարգի բողոքը՝ որ արտայայտում է հասարակութեան հայեացքը այդ սոսկալի երևոյթի վերայ, ժա) և վերջապէս ի նկատի առնելով բոլոր վերոյիշեալ հանգամանքները ի միասին, յակամայս գալիս է մարդ այն եզրակացութեան, թէ Կոկոյեան պառաւը բոլորովին չէ հասկացած իւր վերջին կտակի միտքը, որ և կորզել են նորանից Բերբերեանները շարժելով նորա կրօնական զգացմունքների թելերը՝ և նկարագրելով նորան՝ թէ ինչպէս կառուցանելու եկեղեցու մէջ իւր սանուհիները ամէն օր պիտի յիշեն նորան իրանց աղօթքներում և պիտի աղօթեն նորա հոգու փրկութեան համար։ Այդ բաւական էր՝ որ իւր վերջին բոպէներին հոգու մասին մտածող պառաւը տար իւր յօժարութիւնը կտակը փոխելու իւր այդ

վանքի նուիրական նպատակին համար, համոզուած լինելով՝ թէ այդ դէպքում նա մացնում է միայն նոր յօդուած եկեղեցու մասին և դարանով անգամ մի ևս յայտնում է իւր մայրական խնամքը սիրած դպրոցին վերաբերմամբ։ Դեռ անցեալ տարի այս բոլորի մասին, դպրոցի տեսուչ Գ. Զարիհեանը զեկուցել էր պ. դատախազին՝ խնդրելով օրինաւոր պատասխանատուութեան ենթարկել յանցաւորներին՝ քրէական յանցանքի համար, սակայն նորա խնդիրը թողնուեցաւ առանց հետևանքի՝ պատճառ որ վերոյիշեալ յանցանքը ոչնչացրած համարվում էր երկու իրար յաջորդող Բարձրագոյն և Ամենաողորմած Մանիֆեստներով 1894 և 1896 թուականին։ Ինչպէս տեսնում է ընթերցողը, այս գործի մէջ տուժում է դպրոցը, որ հանդուցեալ Բարեբար Մկրտիչ Աղայի սուրբ կամքը գրուած է նոցին Կայսերական Մեծութեանց անընդմիջական հոգատարութեանը ներքոյ։ Հարս տարի անցաւ պատուի մահից յետոյ, գործը շարունակում է դատաստանական բոլոր բարձր Ատեաններում և այժմ Տեսչի բողոքով հասել է Ծերակոյտի քաղաքական մասի Վճռարկ Ատեանը և նորա կանոնաւոր վճռից կախուած է և դպրոցի ապագայ վիճակը. կվերածուի նա միջնակարգ իգական սեռի ինստիտուտի, թէ պիտի մնայ նախկին եկեղեցի դրութեան մէջ։

Իդէպ՝ եթէ Ծերակոյտը յարգէ տեսչի բողոքը եկարգարել գործի վերաքննութիւնը Խարկովի Դատաստանական Պալատում, հետևեալ անձինքը պիտի վկայեն վերոյգրեալը՝ 1) Զարիֆեան ա. քահանայ, 2) Պալապանեան Մինաս, 3) Ատուածատրեան Սրապիոն բժիշկ, 4) Աբաճալեան Խաչատուր-պեռական խորհրդական, բժիշկ, 5) Մատեոսեան Միքայէլ-վաճառական, 6) Խոջայեան Դաւիթ-պատուաւոր հաշտարար դատաւոր, 7) Տրապիզոնցեան Բաղատար-բժիշկ հիւանդանոցի, 8) Թանդեան Խաչատուր-ուսուցիչ Կոկոյեան

դպրոցի, 9) Ալեքսանդրի Մ. Ա. անուշուհի Գոհոյեան դպրոցի, 10) Աբրամով Նիկիտա Եղենիշ-բժիշկ, 11) Քեշիշեան Ասատուրատուր Սանտիանեան-քաղաքային բժիշկ, 12) Մարտով Միքայել Նիկիտիչ-Գոհոյեանի ազգական, 13) Բարաբանեան Իւան Նիկիտիչ-ազգական Գոհոյեանի, 14) Բաղդանեան-կապակի վկան, 15) Ալեքսանդրի Մարիամ Միքայէլեան-ուսուցչուհի Գոհոյեան դպրոցի։

1900 Դեկտեմբերի 5
Նոր Նախիջեւան։

ԼՍԵԿՍՍՍ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՈՒՆ ԱՍՏՆՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Մ. ԱԴԱՄՅԱՆԻ